

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ



Երեքշաբթի, 11 Ապրիլ. Կէսօրէ ետք, ժամը 3:45-ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը նախագահութեամբ Սբ. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան Սրբազան Հօր, Զատկական շնորհաւորութիւններու գնաց Ֆրանչիսկեան Քիւսթոտ՝ Հոգեշնորհ Տ. Ֆրանչեսկո Փաթոնի եւ Միաբանութեան: Ապա ժամը 4:30-ին Լատինաց Ամենապատիւ Տ. Փիերպաթիսթա Արքեպս. Փիցաբալա Պատրիարք Սրբազան Հօր եւ Միաբանութեան:

Երեքշաբթի, 18 Ապրիլ. Սբ. Յարութեան տօնի առիթով, առաւօտեան ժամը 10:30-էն սկսեալ, յաջորդաբար Պատրիարքարան Զատկական շնորհաւորութեան եկան Ֆրանչիսկեան Քիւսթոտ Հոգեշնորհ Տ. Ֆրանչեսկո Փաթոն իր միաբաններով:

Ապա ժամը 11:30-ին՝ Լատինաց Պատրիարքական Փոխանորդը իր միաբաններով, եւ Կաթոլիկ, Բողոքական, Հապէշ, Ղպտի եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր պետեր եւ ներկայացուցիչներ:

Նոյն օրը, կէսօրէ ետք ժամը 4:30-ին, Սբ. Յարութեան տօնին առիթով Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը հանդիսապետութեամբ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան Սրբազան Հօր, Զատկական շնորհաւորութեան գնաց Սուրբ Երկրի մէջ Հայերու հետեւակ՝ Ասորի եւ Ղպտի եկեղեցիներու եպիսկոպոսներուն եւ միաբանութեանց:

Ուրբաթ, 23 Յունիս. Ամերիկայի Անկախութեան 247 ամեակին առիթով Երուսաղէմի մէջ Ամերիկայի դեսպանատան «Պաղեստինեան բաժնի» ղեկաւար՝ Տիար Ճորճ Նոլի կողմէ կազմակերպուած ընդունելութեան, Երուսաղէմի Հայոց

Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցան Դիւանապետ՝ Հոգշ. Տ. Աղան Աբղ. Գոգշեան եւ Կալուածոց տեսուչ՝ Հոգշ. Տ. Կորին Մ. Վրդ. Բաղդասարեան:

Նոյն օրը, Սուրբ Երկրի Ասորիներու Եպիսկոպոս՝ Գերաշնորհ Տ. Անթիմոս Ճաք Յակոբ, ընկերակցութեամբ իր երկու միաբան հայրերու՝ այցելեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Հանդիպման ընթացքին Գերաշնորհ Տ. Անթիմոս Ճաք Յակոբ Սուրբ Աթոռոյս Գահակալին յանձնեց Անտիոքի եւ ամբողջ Արեւելքի Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Մոր Իգնատիոս Աֆրեմ II-ի Շնորհակալագիրը՝ Սուրբ Երկրի կատարած իր առաջին պաշտօնական այցելութեան ընթացքին Սրբատեղեաց մէջ իր պաշտօնական մուտքերը համաձայն Status Quo-ի խաղաղ եւ անխռնղոտ կազմակերպելու համար:

Հանդիպմանը ներկայ էր նաեւ Սուրբ Աթոռոյս Դիւանապետ՝ Հոգշ. Տ. Աղան Աբեղայ Գոգշեան:

Երկուշաբթի, 11 Յուլիս. Իսրայէլի, Միջին Արեւելքի եւ Հիւսիսային Աֆրիկայի տարածաշրջանի տնօրէն Տիկին Գարոլա Նիւրել՝ ընկերակցութեամբ իր օգնականի, այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Հանդիպման ընթացքին Տիկին Գարոլա իր աջակցութիւնը յայտնեց Պատրիարք Սրբազան Հօրը եւ վստահեցուց, որ իր կարելին պիտի ընէ պայքարելու քրիստոնեաներու վրայ հրեաներու թննելու եւ հալածանքներու դէմ:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՏ ԱՐԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ